

- 40 Որ եւ կամեցեալ կառօք շըրջելով,
Փորձել զախտին զօր եւ զանձին կորով,
Գըտանէր զիւր ցաւ առաջին կըշռով,
Եւ ըզբովանդակ անձն իւր անկորով:
- 41 Սոյն փորձ իսկ լինէր յայտնի ինչ պատճառ
Մընալոյ նորա յայս քաղաք իսպառ,
Ուր յաւէտ տըկար եւ շերբէք կայտառ
Մերձէր յիւր շիրիմ շաւղաւ յոյժ պայծառ:
- 42 Աստ զատ ի Հայոց նա մըխիթարիւր,
Յօտարազանց իսկ ոըք դային առ իւր,
Ընդ որս եւ բըդեշխ քաղաքիս ամուր
Եւ փոխան Տեսչին Բիզայի թըւիւր:
- 43 Բովանդակ նոքին ափսոսմամբ մեծաւ
Դիտէին ըզնա պատեալ տագնապաւ,
Ընդ որոց խօսէր ինքնին յոյժ սակաւ,
Իսկ ի պահանջել հարկին թարգմանաւ:
- 44 Բըժիշկը յըսկրզբան ոչ ճանաչէին
Բարեպէս ըզցաւ Սարգըսի անձին,
Այլ տակաւ տակաւ փորձեալ հաստեցին,
Գոլ ջըրգողութիւն սըրտի լ' այն յոյժ հին:
- 45 Որք եւ ասէին թէ պատճառեալ է
Ի նա նոյն ախտ չար ի տըխրութենէ,
Եւ տառապանաց մեծէ իմեքէ,
Որ զարեան նորին պտոյտ վըրդովէ:
- 46 Այսուիկ երեւէր թէ նորին աքսոր
Ճաշակ մահառիթ եւ վըտանդաւոր
Եղեալ էր պատճառ կարի զօրաւոր,
Նոյն հիւանդութեան չար եւ թիւնաւոր: